

Եղիշեն (410-485) V դարի ականավոր հայ մտածող է, պոմիչ, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոս: Նա շարունակում է այն գործը, որ սկսել էին առաջին հայ ջատագովները՝ Մեսրոպ Մաշտոցը և Եզնիկ Կողբացին: Մաշտոցի ջատագովության նպատակը քրիստոնեության տեսական հիմնավորումն էր և նրա դիրքերի ամրապնդումը Հայաստանում: Այն ուղղված էր նախ և առաջ հեթանոսության մնացորդների դեմ Հայաստանում: Եզնիկ Կողբացու ջատագովությունը առավելապես ուղղված է պարսից գրադաշտականության դեմ: Եթե Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը նվիրված է պարսիկների դեմ սպառնալիք համազգային ապստամբության հիմնավորմանն ու արդարացմանը տեսական, գաղափարախոսական մակարդակի վրա, ապա Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկը արդեն տեղի ունեցած ապստամբության արդարացումն ու հիմնավորումն է, որը նույնպես իրականացվում է տեսական-գաղափարախոսական մակարդակի վրա: Իր այդ նպատակի իրագործման համար Եղիշեն հաճախ անդրադառնում է նաև իրավաբանական բնույթի հարցերին, որոնք թեև ինքնանպատակ չեն նրա համար, սակայն քավականին կարևոր գործառնությանի դեր են կատարում նրա ուսմունքում:

Եղիշեի իրավաբանական հայացքների համարժեք ըմբռնման համար անհրաժեշտ է հաշվի առնել որոշ կարևոր հանգամանքներ: Պետք է շեշտել, որ հայ մտածողը իրավա-քաղաքական խնդիրները դիտարկում է ժամանակաշրջանի քաղաքական-գաղափարախոսական մթնոլորտի, ծավալված ազգային-ազատագրական պայքարի համատեքստում: Եղիշեն, ինչպես և իր նախորդները (Մեսրոպ Մաշտոց, Եզնիկ Կողբացի), քաջ գիտակցում է, որ պետականության կորստից հետո հայ ազգին սպառնում է ազգային ինքնության կորուստը: Անհրաժեշտ է շեշտը դնել հոգևոր-մշակութային ինքնության պահպանման վրա: Չնայած պատմական իրավիճակի պայմաններում դրա հիմք կարող էր հանդիսանալ միայն Հայ եկեղեցին և նրա կողմից քարոզվող քրիստոնեությունը: Հայ մտածողը համարում է, որ պարսից արքունիքի և նրան ծառայող մոգերի մտադրությունն է՝ վերացնել Հայաստանում քրիստոնեությունը, տարածել գրադաշտականությունը և դրանով իսկ քաղաքական խնդիրը ամրացնել նաև գաղափարական մակարդակի վրա<sup>1</sup>: Այդ պատճառով, հայրենիքի համար պայքարը Եղիշեն ներկայացնում է «որպես պայքար սեփական հավատի, հայ եկեղեցու գոյության համար»<sup>2</sup>:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Եղիշեն միջնադարյան քրիստոնեական մտածող է, ինչի հետևանքով, ինչպես և Եզնիկ Կողբացին, իրավաբանական խնդիրները նա դիտարկում է կրոնադավանաբանական ըմբռնումների տեսանկյունից և դրանց լուծումները կապում է կրոնաստվածաբանական հիմնահարցերի հետ: Թեև այդ ամենը ի վերջո ընդհամենը միջոց է ազգի առջև ծառայած գերխնդիրը լուծելու համար: Այս տեսանկյունից միանգամայն իրավացի է Ս.Ս.Արևշատյանը, երբ գրում է, որ Եղիշեի «հայրենասիրությունը հանդերձված է կրոնական ձևի մեջ, ինչը, սակայն, չի կարող թաքցնել նրա իրական դեմքը որպես քաղաքական մտածողի և փիլիսոփայի, որը նպատակ է դրել պաշտպանել եկեղեցական-քաղաքական, ազգային անկախության գաղափարները»<sup>3</sup>:

Ինչպես և Եզնիկ Կողբացին, պարսից կրոնը քննադատելիս՝ Եղիշեն հատուկ կանգ է առնում աշխարհում առկա չարիքի մեկնաբանության վրա և վերլուծում է այստեղից բխող հնարավոր հետևանքները (այդ թվում՝ իրավաբանական): Չարիքի էությունը իր ըմբռնումը Եղիշեն արտահայտում է, երբ շարադրում է հայ իշխանների և հոգևորականության պատասխանը պարսից արքունիքի կողմից արձակված հավատափոխման հրահանգին: Չարադաշտականության դուալիզմը (երկաստվածությունը) բացարձականացնում է չարիքը, քանի որ համարում է, թե աստվածներից մեկը բարի է, իսկ մյուսը չար<sup>4</sup>: Եղիշեն տարբեր օրինակներով փորձում է ցույց տալ չարիքի հարաբերական բնույթը: Իսկ չարիքի, «հանցավորության» ակունքը մարդու ազատ կամքն է<sup>5</sup>: Որպես հետևանք Եղիշեն հանգում է հակաճակատագրապաշտական դիրքորոշման, որը տվյալ ժամանակաշրջանում հույժ արդիական էր, քանի որ արդարացում էր հայերի պայքարը, ապստամբությունը օտարազգի լծի դեմ: Եթե Եզնիկ Կողբացին, որպես սպառնալիք ապստամբության գաղափարախոս, սահմանափակվում է ընդհանուր հակաճակատագրապաշտական դիրքորոշմանը, կոչ անելով զինված կերպով պայքարել զավթիչների դեմ<sup>6</sup>, ապա Եղիշեն, որպես արդեն տեղի ունեցած ապստամբության արդարացնող, նման թշնամի, որի դեմ անհրաժեշտ էր պայքարել, համարում է կոնկրետ ազգի՝ պարսիկներին: Ս.Ս.Արևշատյանը գրում է. «Եղիշեն շարունակում է Եզնիկի հակաճակատագրապաշտական գիծը, սակայն ... դնում է այն իրական, կոնկրետ հողի վրա: Նրա մոտ որպես թալանիչ և ավազակ ներկայանում են պարսիկները...»<sup>7</sup>:

Երկաստվածության անտրամաբանական և անբնական լինելը Եղիշեն հիմնավորում է, համեմատություն անցկացնելով երկրային թագավորության հետ: Նա գրում է. «Մի աշխարհը երկու իշխող չի ունենա, ո՛չ էլ մի արարածը՝ երկու աստված»<sup>8</sup> կամ «Մի իշխանությունը երկու թագավոր չի ունենում»<sup>9</sup>: Եթե դիտարկենք Եղիշեի այս դրույթները քաղաքական մտքի տեսանկյունից, ապա պետք է արձանագրել, որ հայ մտածողը պաշտպանում է քաղաքական իշխանության մոնիզմի սկզբունքը և ընդունելի է համարում խիստ կենտրոնացված միապետական իշխանությունը: Նման դիրքորոշումը բնական է V դարի հայ մտածողի համար: Ընդհամենը մի քանի տասնյակ տարի էր անցել Արշակունյաց հայոց թագավորության անկման և վերացումից հետո: Եղիշեն լավ հասկանում է, որ դրա հիմնական պատճառներից էր հայ թագավորների և նախարարական տների միջև ընթացող անզիջում պայքարը, որը փոշիացնում էր պետության ուժերը, թուլացնում էր այն, դարձնում խոցելի արտաքին սպառնալիքների առջև: Պատահական չէ, որ հայ մտածողը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Եթե մի աշխարհին հանդգնեն իշխել երկու թագավորներ, աշխարհը կփչանա և թագավորությունները կոչնչանան»<sup>10</sup>: Երկու (կամ ավելի) թագավորի առկայությունը ենթադրում է իշխանության ասպեկենտրոնացում, տարածքների բաժանում և, ի վերջո, պետության թուլացում: Իր այս գաղափարը հիմնավորելու համար Եղիշեն դիմում է Աստվածաշնչի հեղինակությանը, մեջբերում է կատարում Ավետարանից. «Ամեն մի տուն և թագավորություն, որ բաժանվում է ինքն իր մեջ, հաստատուն մնալ չի կարող»<sup>11</sup>: Եվ ընդհանրապես, ըստ Եզնիկի, «եթե ներս է սպրդում երկպառակությունը, միաբանությունը քանդվելու հետ հեռանում է նաև երկնավոր առաքինությունը»<sup>12</sup>: Յուրաքանչյուր գործ միայն այն դեպքում է պսակվում հաջողությամբ, երբ հիմնված է միաբանության վրա: Միաբանությունը պետք է իր հերթին հիմնվի ընդհանրական շահի վրա: Նման ընդհանուր շահ հայերի համար հանդիսանում է նրանց ազգային շահը՝ օտար լծից ազատվելը և անկախություն ձեռք բերելը: Եղիշեն համարում է, որ հայերը պետականության կորստից հետո գիտակցեցին այդ ազգային ընդհանրական շահի առաջնայնությունը այլ շահերի նկատմամբ, կարողացան միաբանվել և պայքարի դուրս գալ պարսից լծի դեմ: Այդ ժամանակ միայն բոլոր անհատական և նույնիսկ խավային-դասակարգային կարիքները, շահերը, նպատակները դարձան երկրորդական համազգային նկատմամբ. «Այնուհետև տեղը ծառայից ավելի չէր երևում, և ո՛չ էլ փափուկ մեծացած ազատը՝ տառապյալ գեղջուկից... Վեր ընկած էր մնում ոսկին, և ոչ որ հատկապես իր համար արծաթ չէր վերցնում, և առանց ազահության արհամարված, անարզված էին զարդարանքի ու մեծարանքի համար հատկացված պատվական հագուստները: Ինչպես և ամեն մի գույք ոչինչ էր համարվում իր տերերի աչքում»<sup>12</sup>: Նեղ անհատական և խավային-դասակարգային նկատմամբ ազգային գերակայության, առաջնայնության

սկզբունքը, որի առաջին ձևակերպողներից էր Եղիշեն, հետագայում հատուկ տեղ կզբաղեցնի հայ իրավաբանական մտքի մեջ:

Ինչպես նշեցինք, Եզնիկ Կողբացին միապետական իշխանության կողմնակից է: Ինչպես նշում է Կ.Ա.Միրումյանը, «միջնադարում թագավորի իշխանությունն, ընկալվում էր որպես սրբազան, աստվածատուր»<sup>13</sup>: Եղիշեն բացառություն չի կազմում: Նա նույնպես համարում է, որ թագավորական իշխանությունը աստվածային ծագում ունի և այդ պատճառով էլ սրբազան է. «Նախնիներից սովորություն ունենք՝ աստվածատուր պատվիրանի համաձայն՝ արոթք անել թագավորի կյանքի համար և անդադար խնդրել աստծուց նրա համար երկար կյանք, որպեսզի խաղաղությամբ վարի այն տիեզերական իշխանությունը, որ աստված է հանձնել նրան»<sup>14</sup>: Այդ իսկ պատճառով, թագավորը աստվածային օրենքի կրողը և նրա իրականացման երաշխիքը պետք է լինի երկրի վրա: Թագավորին է ամբողջությամբ պատկանում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը երկրի վրա: Աստծուց ստացած իրավունքի համաձայն նա օրենքներ է արձակում համապատասխան «աստվածային օրենքին», նրա ձեռքում է գտնվում ամբողջ գործադիր իշխանությունը, հենց նա էլ, դատավորներ նշանակելով, ղեկավարում է դատական իշխանությունը. «[դատավորը] թագավորից ստացած իրավունքի համաձայն պատժի միջոցով կառավարում է իր իշխանությունը»<sup>15</sup>: Այսինքն՝ լինելով աստվածատուր՝ թագավորական իշխանությունը երկրի վրա պիտի լինի բացարձակ: Այստեղից հետևում է, որ մարդիկ (երկրի քաղաքացիները) պիտի լինեն հնազանդ, առանց տարակուսանքի ենթարկվեն թագավորական իշխանությանը: Այս գաղափարը Եղիշեն արտահայտում է Ղևոնդ Երեցի շուրթերով. մեր կրոնը «պատվիրում է մեծապես պատվել երկրավոր թագավորներին և նրանց սիրել մեր բոլոր ուժով, ոչ իբրև մի չնչին մարդու՝ մարդկանց միջից, այլ ծառայել, ինչպես ճշմարիտ Աստծուն. և եթե գրկանքներ կրենք նրանց կողմից, երկրավորիս փոխարեն մեզ խոստացավ մեզ խոստացավ արքայությունը: Եվ ... իրավունք չունենք նրան ուրիշ տիրոջ հետ փոխելու...»<sup>16</sup>: Իսկական քրիստոնյայի համար «օրենք չէ ընդդիմանալ երկրավոր իշխաններին», խոնարհ և հեզ պետք է լինել, «առանց խարդախամտության խաղաղասեր լինել բոլորի վերաբերմամբ»<sup>17</sup>:

Սակայն, այնուամենայնիվ, Եղիշեն ընդունում է, որ երբեմն ժողովուրդը կարող է ըմբոստանալ երկրային իշխանավորների դեմ (այդ թվում՝ հայ ազգը՝ պարսից թագավորի դեմ): Որպեսզի տպավորություն չստեղծվի, թե հայ մտածողը հակասում է ինքն իրեն, հարկ ենք համարում հատուկ կանգ առնել նրա կողմից աստվածայինի և երկրայինի հարաբերակցության ըմբռնման և դրանից բխող իրավաբանական բնույթի հետևանքների վրա:

Եղիշեն չի շեղվում պաշտոնական քրիստոնեության դիրքորոշումից, համարելով, որ Աստված և տիեզերքը այնքանով են կապված, որքանով առաջինը արարել է երկրորդը: Այստեղից հետևում է, որ Աստված առաջնային է տիեզերքի նկատմամբ, Աստված էութենական է ու կատարյալ, իսկ աշխարհը երևութական է ու թերի: Թեև մարդը ի տարբերություն այլ արարածների բանկան է և ունի ազատ կամք, սակայն նա էլ է թերի և անկատար Աստծո հետ համեմատած: Այդ պատճառով էլ նա չի կարող ամբողջովին ճանաչել կատարյալը և անահմանը՝ Աստծուն: Ժամանակին Եզնիկ Կողբացին, որպես հիմք ընդունելով այս իրողությունը, առաջ էր քաշել մի հետաքրքիր գաղափար, որ նույնիսկ Աստծո անմիջականորեն (հայտնության միջոցով) տրված գիտելիքը մարդը իր անկատարության պատճառով չի կարող համարժեք և միանշանակ ընկալել: Այդ իսկ պատճառով նույնիսկ Սուրբ Գիրքը հարմարեցված է «մարդկանց ենթադրություններին»<sup>18</sup>: Այս գաղափարը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. թեև Սուրբ Գիրքը Աստծո «խոսքն է», սակայն այն փոխանցվել է Աստծո կողմից մարդկությանը՝ մարդկանց (մարգարեների և առաքյալների) իսկ միջոցով: Իսկ քանի որ նույնիսկ ամենաառաքինի և իմաստուն մարդը կատարյալ չէ, թերի է, ապա անխուսափելի է նաև նրա (Աստծո «խոսքի») հարմարեցումը մարդկային անկատար գոյին:

Նույն սկզբունքը գործում է, երբ խոսքը գնում է «աստվածային օրենքի», աստվածային իրավունքի մասին: Աստվածային իրավունքը կատարյալ է, այն բացարձակ է: Աստված ինքն է նրա սկզբունքները տալիս մարդկությանը. «Այն ձեռքը, որ երկինքն ու երկիրը հաստատեց, նույնը և քարեղեն տախտակների վրա փորագրեց և դպրության տվեց մեզ, որը պարունակում է խաղաղական և փրկարար օրենքներ»<sup>19</sup>: Մարդկության համար այն բացարձակ իղեայ է, որին պետք է ձգտել հնարավորինս մոտենալ, մարմնավորելով աստվածային իրավունքի սկզբունքները երկրային իշխանության տարբեր բնագավառներում, արդի եզրաբանությամբ՝ դրական իրավունքի նորմերի մեջ: Այս տեսանկյունից մարդկության գերագույն նպատակն է, որպեսզի «Աստվածային օրենքը թագավորի ամեն բանում, և նույն օրենքից հանցավորներն ստանան իրենց դատապարտությունն ու պատիժը»<sup>20</sup>: Սակայն Եղիշեն փաստում է, որ իրականում մարդկությունը դեռ շատ երկար ուղի ունի անցնելու այդ ուղղությամբ: Լինելով թերի և անկատար մարդը «աստվածային օրենքը» հաճախ աղավաղում է, մեկնաբանում և հարմարեցնում է իր անկատարությանը: Որպես հետևանք, «եթե նայելու լինենք դեպի ցած՝ երկիր, այն կտեսնենք լի ամեն ապականությամբ և անտուր պղծություններով: Որովհետև ի՞նչ աղետալի բաներ ասես, որ չեն գործվում այս ախտաբեր երկրայինների մեջ. աղքատների թշվառություններ և նրանց անթիվ չարչարանքներ. հարկահանների կողմից ծանր նեղություններ, բռնավոր ընկերների կողմից գրկանք և խոշտանգում» և այլն<sup>21</sup>: Մարդիկ շեղվում են աստվածային դրվածքից և հասարակական հարաբերությունների բնագավառում, և իրենց ներքին, հոգևոր արժեքների ոլորտում. «Կրիսիս՝ անիրավություն, հավիչախություն, գեճ պղծություն ու անառակություն, ներսից՝ ամբարշտություն, ուրացություն, տգիտություն...»: Եվ այդ ամենի պատճառը «կամավոր ազատությունն է»<sup>22</sup>: Այսինքն՝ լինելով անկատար, մարդը չի կարողանում ճիշտ օգտագործել մեծագույն աստվածային նվերը՝ կամքի ազատությունը, և շեղվում է «աստվածային օրենքներից»: Սա է մարդկային հանցավորության եկունքը:

Հնարավոր են դեպքեր, երբ որ թագավորն է շեղվում աստվածային իրավունքից, ինչը հղի է ծանր հետևանքներով, քանի որ «թագավորը միայն իրեն համար չէ պատասխանատու, այլ նաև նրանց համար, որոնց կորստյան պատճառ է եղել»<sup>23</sup>: Հետևաբար, ինչքան մեծ է իշխանությունը, որ տրվում է թագավորին Աստծո կողմից, նույնքան էլ մեծ է նրա պատասխանատվությունը Աստծո առջև: Եղիշեն այն դիրքորոշման կողմնակից է, ըստ որի, եթե խախտվում է «աստվածային օրենքը» (թեկուզև թագավորի կողմից), անհրաժեշտ է դուրս գալ պայքարի և պաշտպանել այն: Այս դիրքորոշումը հայ մտածողը արտահայտում է սպարապետ Վարդան Մամիկոնյանի շուրթերով: Հայոց գորավարը, դիմելով գորբին, հիշում է նախնիին հարթանակները և ասում, որ «ուրիշներին կոտորելով աստվածային օրենքի համար՝ մեծ պարծանք ժառանգեցինք»<sup>24</sup>: Եղիշեն շարունակում է, որ սպարապետը «ձեռքն առնելով Մակաբայեցոց քաջ նկարագիրը կարողում էր, ... թե ինչպես մարտնչելով կռվեցին աստվածատուր օրենքների համար»: Միաժամանակ, Վարդանը հիշեցնում է այն դեպքերը, երբ հնազանդվելով «Աստծուց շեղված» թագավորներին, անցավորը նախապատվելով աստվածայինին, որոշ ազգեր կանգնեցին կործանման եզրին<sup>25</sup>:

Այս տեսանկյունից, ըստ Եղիշեի, արդարացի է նաև հայերի պայքարը պարսից թագավորի դեմ, քանի որ նա «իր իշխանությունը վարում է մոզերի կրոնի համաձայն»<sup>26</sup>: Գրանով իսկ նա արդեն հեռացել է «աստվածային օրենքից»: Ավելին, նա «աշխարհի ավերող է և ամենի մարդկանց սպանող, աստանայի բարեկան և աստծու թշնամի»<sup>27</sup>:

Այսպիսով, Եղիշեն պաշտպանում է այն տեսակետը, որ թագավորական իշխանությունը աստվածային ծագում ունի, այդ պատճառով էլ՝ սրբազան է: Սակայն, քանի որ թագավորն էլ մարդ է և կարող է շեղվել «աստվածային օրենքից»,

ապա ժողովուրդը իրավունք ունի պայքարի դուրս գալ նման թագավորի դեմ: Եղիշեի այս ըմբռնումները վերլուծելով Կ.Ա.Միրումյանը հանգում է այն եզրակացության, որ նա «առաջիններից է իրավաբաղադրական մտքի պատմության մեջ հստակ ձևակերպում «երկու սրերի» հայեցակարգը, որը հիմնվում է իշխանության երկու ձևերի (աշխարհիկ և հոգևոր) մասին գաղափարի վրա»<sup>28</sup>: Մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է խոսել ոչ թե իշխանության երկու ձևերի, այլ իրավունքի (լայն իմաստով) երկու մակարդակների մասին՝ աստվածային (բնական իրավունք) և իրականում գործող իրավական նորմերի ամբողջություն (դրական իրավունք):

Ինչպես արդեն նշել ենք, մարդու հանցավորության ակունքը, ըստ Եղիշեի, նրա ազատ կամքն է: Սակայն պետք է նշել, որ այս հարցում հայ մտածողը հատուկ նշանակություն է տալիս նաև մադու լուսավորվածության, կրթվածության, իմաստության մակարդակին: Եղիշեն գրում է. «Բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից: Կույրը գրկվում է արեգակի ճառագայթներից,, իսկ տգիտությունը գրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր լինել, քան մտքով կույր...»: Հայ մտածողը հատուկ ընդգծում է, որ այդ պահանջը նախ և առաջ վերաբերում է իշխանավորներին և հենց թագավորին. «Եթե թագավորը իմաստությունն իրեն աթոռակից չունի, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել»<sup>29</sup>: Ազատագրական պայքարն էլ, որն հաճախ պահանջում է ինքնագոհություն, պետք է հենված լինի երևույթների խորը իմաստավորման վրա: Պայքարին մասնակցող մարտիկը պետք է խորը գիտակցի, թե ինչի համար է նա պայքարում և ինչ գին կարող է վճարել հաղթանակի համար: Եվ վերջապես նա պիտի այնքան իմաստուն լինի, որ իմաստավորի նաև մահը. «Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից. իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում»<sup>30</sup>:

Խոսելով տարբեր տեսակի հանցագործությունների մասին՝ Եղիշեն ուշադրություն է դարձնում ևս մի հետաքրքիր հանգամանքի վրա: Նա համարում է, որ հանցանքը այնքանով է ծանր, որքանով հանցանք գործողը գիտակցում է իր կատարածի հանցավոր բնույթը: Միևնույն արարքը, որ կատարվում է տարբեր իմացության աստիճանով տարբեր մարդկանց կողմից, մի դեպքում պիտի ստանա մի գնահատական, իսկ մյուս դեպքում՝ մի այլ գնահատական: Պարզաբանման համար Եղիշեն նորից դիմում է Աստվածաշնչի հեղինակությանը. «Այն ծառան, որ չգիտե իր տիրոջ կամքը և ծեծի արժանի մի գործ է կատարում, ծեծ ուտելն ուտում է, բայց ավելի քիչ. իսկ ով լավ տեսչակ է թագավորի կամքին և որևէ հանցանք է գործում նրա առաջ, բազմապատիկ տանջանքի է ենթարկվում առանց բարեխոսի»<sup>31</sup>:

Այսպիսով, լինելով հայ ազատագրական պայքարի գաղափարախոսներից մեկը՝ Եղիշեն հատուկ կանգ է առնում այն իրավաբաղադրական խնդիրների վրա, որոնց լուծումը այս կամ այն ձևով կապված է այդ պայքարի հետ, կարող է այն արդարացնել ու հիմնավորել, և ի վերջո նպաստել դրան: Նա դիտարկում է այդ խնդիրները կրոնաստվածաբանական հիմնահարցերի հետ սերտ կապի մեջ:

- 1 Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1994, էջ 12:
- 2 *Арешатян С.С.* Формирование философской науки в Древней Армении (V – VI вв.). Ереван, 1973, с. 115.
- 3 Նույն տեղում, էջ 115:
- 4 Եղիշե, Վարդանի և հայոց պատմության մասին, էջ 26:
- 5 Նույն տեղում, էջ 27,29:
- 6 Տե՛ս Եզնիկ *Կողբացի*, Եղծ Աղանդոց, Երևան, 1994, էջ 133:
- 7 *Арешатян С.С.* Формирование философской науки в Древней Армении, с. 115.
- 8 Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, էջ 28:
- 9 Նույն տեղում, էջ 118:
- 10 Նույն տեղում, էջ 28:
- 11 Նույն տեղում, էջ 11:
- 12 Նույն տեղում, էջ 51:
- 13 *Միրումյան Կ.*, Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 2002, էջ 104:
- 14 Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, էջ 25:
- 15 Նույն տեղում, էջ 31:
- 16 Նույն տեղում, էջ 116:
- 17 Նույն տեղում, էջ 120:
- 18 Եզնիկ *Կողբացի*, Եղծ աղանդոց, էջ 81:
- 19 Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, էջ 26, տե՛ս նաև էջ 29, 75:
- 20 Նույն տեղում, էջ 44:
- 21 Նույն տեղում, էջ 81:
- 22 Նույն տեղում, էջ 121:
- 23 Նույն տեղում, էջ 16:
- 24 Նույն տեղում, էջ 75:
- 25 Նույն տեղում, էջ 76 –77:
- 26 Նույն տեղում, էջ 10:
- 27 Նույն տեղում, էջ 121:
- 28 *Мирумян К.* Права человека / историко-политический очерк. Ереван, 2002, с. 89.
- 29 Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, էջ 16:
- 30 Նույն տեղում, էջ 16:
- 31 Նույն տեղում, էջ 30:

#### Ամփոփում

V դարի հայ մտածող և պատմիչ Եղիշեն պարսից լծի դեմ պայքարի գաղափարախոսներից էր: Այդ պայքարը հիմնավորելու և արդարացնելու համար նա շոշափում է իրավաբաղադրական բնույթի կարևոր խնդիրներ: Նա դրանք դիտարկում է կրոնադավանաբանական ըմբռնումների տեսանկյունից և դրանց լուծումները կապում է կրոնաստվածաբանական հիմնահարցերի հետ: Եղիշեն ժխտում է չարիքի բացարձակությունը, քննադատում է ճակատագրապաշտությունը և համարում է, որ չարիքը, հանցանքը, որի ակունքը մարդու ազատ կամքն է պետք է պատժվի:

Նա պաշտպանում է խիստ կենտրոնացված միապետական իշխանության գաղափարը: Եղիշեն պաշտպանում է այն տեսակետը, որ թագավորական իշխանությունը աստվածային ծագում ունի, այդ պատճառով էլ՝ սրբազան է: Սակայն, երբ թագավորը շեղվում է «աստվածային օրենքից», ապա ժողովուրդը իրավունք ունի պայքարի դուրս գալ նման թագավորի դեմ: Հայ մտածողը հանցավորությունը կապում է նաև մարդկանց կրթվածության մակարդակի հետ: Որպես հանցանքի ծանրացուցիչ հանգամանք, Եղիշեն դիտում է դրա կատարման գիտակցվածության փաստը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի  
գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկ-  
նածու՝ *Նովհաննես Սարգսյան*